

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ XIV – XVII ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ա. Յ. ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

XIV դ. առաջին կեսին քայքայվող մոնղոլական կայսրությունում սկսված գահակալական կռիվները տարածվեցին նաև նրա կազմում ընդգրկված Հայաստանում: Լայնածավալ պատերազմական գործողությունների հետևանքով ավերվեցին բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր: Զգալի կորուստներ կրեց երկրի բնակչությունը: Անկում ապրեցին արհեստագործությունն ու առևտուրը, հետադիմեց գյուղատնտեսությունը, կասեցվեց մշակութային կյանքի զարգացումը: Մեծ չափեր ընդունեց հայ բնակչության արտագաղթը: Նույն գործընթացները տեղի ունեցան նաև Նախիջևանի երկրամասում: Մոհամմեդ իբն Հինդուշահ Նախիջևանցու կազմած պաշտոնական փաստաթղթերի ժողովածուի մեջ տեղ գտած մի բողոքագրից երևում է, որ աղքատության հասցված մարդիկ լքում էին իրենց տնտեսությունները և հեռանում այլ վայրեր¹: Արտագաղթում էին նաև մեծահարուստները՝ Նախիջևանի խոջաներից շատերը²: Երկրամասի հայ բնակչության անտանելի վիճակը պարարտ հող հանդիսացավ կաթոլիկ հոգևորականների գործունեության համար:

Դեռևս XIV դ. առաջին քառորդին հայ և կաթոլիկ եկեղեցիների միություն ստեղծելու նպատակով կաթոլիկ կրոնավորների և նրանց միացած որոշ հայ հոգևորականների քարոզչության հետևանքով Նախիջևանի Երնջակ և Ճահուկ գավառների հայ բնակչության մի մասը հարեց Հռոմի կաթոլիկ եկեղեցուն³:

Հայաստանի քաղաքական և տնտեսական ծանր իրավիճակը բացասաբար անդրադարձավ նաև երկրամասի մշակութային կյանքի զարգացման վրա: Այսուհանդերձ շարունակում էին գործել մի շարք գրչության կենտրոններ: XIV դ. առաջին կեսին գրչության կենտրոններ են եղել Զուղան⁴, Բիստի Կոպատափ անապատը⁵, Նախիջևանը⁶, Երնջակի Քոնա գյուղի ս. Աստվածածին վանքը⁷: XIV դ. երկրորդ կեսին հիշատակվում են Ագուլիսի ս. Թումայի վանքը⁸, Երնջակի

¹ *И. П. Петрушевский*, Земледелие и аграрные отношения в Иране XIII – XIV веков, М – Л., 1960, с. 278.

² *В. Г. Тизенгаузен*, Сборник материалов относящихся к истории Золотой Орды, М.-Л., 1941, с. 101.

³ Տես *Հ. Մանանդյան*, Երկեր, Գ, Ե., 1977, էջ 351; *Հ. Սահակ Ճեմճեմեան*, Նախիջևանի հայոց վարժարանը եւ Հռոմը, Վենետիկ – Ս.Ղազար, 2000, էջ 1:

⁴ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Եր, 1950, էջ 199:

⁵ Նույն տեղում, էջ 218:

⁶ Նույն տեղում, էջ 25:

⁷ Նույն տեղում, էջ 216, 245:

⁸ Նույն տեղում, էջ 517:

Ապրակունյաց վանքը⁹, Նախիջևանը¹⁰, Երնջակի նորակերտ գյուղը¹¹, Գողթնի Սինեական անապատը¹²:

XIV դ. վերջերին Հայաստանը ենթարկվեց անասելի աղետների: Լանկ Թամուրի զորքերն ամայացրեցին ու անմարդաբնակ դարձրեցին ամբողջ երկրամասեր¹³:

1386 թ. Լանկ Թամուրի զորքերը գրավում են Թավրիզը, Նախճավանը և պաշարում Երնջակի բերդը, որի պաշտպանությունը ղեկավարում էր Ջելաիրյան սուլթան Ահմադի որդի Տահիրը¹⁴: Նույն թվականին Նախիջևանն ավերում և կողոպտում են Ոսկե Հորդայի խան Թողթամիշի զորքերը¹⁵: Երնջակի պաշտպանությունը տևում է մինչև 1399 թ.: Ամրոցի պաշարումը վերացնում են վրաց թագավոր Գեորգի VII թագավորի և Շաքիի տիրակալ Սիդի Ալիի միացյալ ուժերը, որոնք պարտության են մատնում Լանկ Թամուրի զորքերին¹⁶: 1400 թ. Թամուրը վրեժխնդիր է լինում վրաց թագավորից՝ գրավելով նրա ամրոցները, կոտորելով և գերելով բնակչությանը¹⁷: Երկարատև է եղել նաև Պռոշյանների իշխանանիստ Շահապոնք ամրոցի պաշտպանությունը (1387 թ.)¹⁸: 1397 թ. Լանկ Թամուրի հերթական արշավանքի ժամանակ ավերվեցին Վանը, Երևանը և Նախիջևանը¹⁹:

XV դ. սկզբին Նախիջևանը և շրջակա գավառներն ընդգրկված են եղել Լանկ Թամուրի տերության կազմի մեջ: Շարունակական պատերազմների հետևանքով Հայաստանի առանձին երկրամասեր անմարդաբնակ էին դարձել: Ծայրահեղ չափեր էր ընդունել արտագաղթը: Բնակչության կազմում տեղի էին ունեցել ժողովրդագրական լուրջ փոփոխություններ²⁰: Այդ ծանր ժամանակի արտացոլումն էր նաև մշակութային կյանքի անկումը:

⁹ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 532:

¹⁰ Նույն տեղում, էջ 550:

¹¹ Նույն տեղում, էջ 424:

¹² Նույն տեղում, էջ 553:

¹³ **Մ. Կ. Ջուլալյան**, Հայ ժողովրդի XIII – XVIII դարերի պատմության հարցեր, ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա, քաղաքական պատմություն, Ե., 1990, էջ 85:

¹⁴ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 628; Մանր ժամանակագրություններ (XIII – XVIII դդ.), հ. II, կազմեց՝ Վ. Ս. Հակոբյան, Ե., 1956, էջ 534: Ըստ Կլավիտի «Այս ամրոցը շրջապատված էր պարսպով՝ աշտարակներով, և ներքին շրջանակում տարածվում են շատ այգիներ ու պարտեզներ և կից ցորենի արտեր, նույնպես այնտեղ կան բազմաթիվ քրի աղբյուրներ, արոտավայրերով՝ կենդանիների համար, ամրոցի շուրջը և վերևի բարձունքներում» (**Հովհ. Հակոբյան**, Ուղեգրություններ, հ. Ա, Ե., 1932, էջ 116):

¹⁵ **Հովհ. Հակոբյան**, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 124:

¹⁶ Տես Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, էջ 29:

¹⁷ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 628:

¹⁸ Նույն տեղում, էջ 567-568:

¹⁹ Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 427:

²⁰ **Ա. Յ. Ղարաբաղյան**, Ժողովրդագրական տեղաշարժերը Հայաստանում (մ.թ.ա. II - մ.թ. XV դդ.), Ե., 2005, էջ 42:

XV դ. տեղի ունեցած մշակութային նոր վայրէջքի մասին է վկայում մեզ հասած գրչության կենտրոնների քանակը: XV դ. սկզբին վկայվել են Քոնան (ճահուկ)²¹, Մաղարդա կամ Շամբիժորի ս. Նախավկայի վանքը²², Ագուլիսը²³, իսկ նույն դարի երկրորդ կեսին՝ Ջուղան²⁴, Կուզո (Կուքի) վանքը²⁵: Նկատելի էր անկումը նաև մշակույթի այլ ասպարեզներում: Նշված ժամանակահատվածում կառուցվել է Բոհրուտի կամուրջը, վերակառուցվել է Բիստի ս. Նշան եկեղեցին (XIVդ.) և կանգնեցվել են խաչքարեր Ջուղայում²⁶:

XIII դ. վերջերին Միջին Ասիայից արևմուտք տեղափոխվեցին Կարա-կոյունլու և Ազ-կոյունլու թուրքմենական ցեղերը: XV դ. նրանց միջև բազմաթիվ բախումներ են տեղի ունեցել: XV դ. սկզբներին Կարա - կոյունլուներն իրենց առաջնորդ Կարա-Յուսուֆի գլխավորությամբ նվաճում են Արարատյան դաշտը, Մարանդը, Նախիջևանը, Շարուրը և Մակում²⁷: Այնուհետև նրանք պարտության են մատնում թամուրյաններին, ապա Իրաքում իշխող Ջելաիրյաններին և իրենց տիրապետությունը հաստատում Իրաքում, Ատրպատականում, Քրդստանում, Հայաստանում և Առանում (1410-1468 թթ.)²⁸:

Նախիջևանի երկրամասը նոր հարվածներ ստացավ և տուժեց Կարա-կոյունլու թուրքմենների միջև ծագած ներքին պառակտումներից: 1437 թ. պատերազմ սկսվեց Ղարա-Յուսուֆի որդիների՝ Իսքանդարի և Ջհանշահի միջև: Իսքանդարը պարտվեց և ապաստանեց Երնջակ բերդում, որը շուտով պաշարվեց հակառակորդի կողմից: Իսքանդարը սպանվում է Երնջակում՝ որդու՝ Շահուբաթի (Շահ – Կուբադի)²⁹ և իր զորականների կազմակերպած դավադրության ժամանակ³⁰:

Ջհանշահի օրոք (1408-1467) նրա որդի Հասան Ալին եղել է Նախիջևանի կուսակալ: 1458 թ. նա ապստամբություն բարձրացրեց հոր դեմ: Սակայն 1459 թ. այդ ապստամբությունը ճնշվեց: Հասան Ալին բանտարկվեց Մակուի բերդում և այնտեղ մնաց մինչև Ջհանշահի սպանությունը³¹: 1468 թ. Մարանդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Ազ-կոյունլուները պարտության են մատնում Հա-

²¹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1955, էջ 64:

²² Նույն տեղում, էջ 365, 396, 504:

²³ Նույն տեղում, էջ էջ 337, 423, 604:

²⁴ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1958, էջ 64:

²⁵ Նույն տեղում, էջ 159, 171, 319, 430:

²⁶ Տես **Ա. Ա. Այվազյան**, Նախիջևան. գիրք հուշարձանաց, Ե., 1990, էջ 13, 20, 24:

²⁷ Տես Шараф-хан-Бидлиси, Шараф-Наме, т. I, М., 1967, с. 418.

²⁸ Տես **Գ. Ե. Կիրակոսյան**, Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Ե., 1997, էջ 79:

²⁹ Հայ ժողովրդի պատմություն, էջ 38:

³⁰ Տես **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 391-392.

³¹ Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 222; **И. П. Петрушевский**, Государство Азербайджана в XV в., сборник статей по истории Азербайджана, вып. I, Б., 1949, с. 167.

սան-Ալիի բանակին³² և հաստատում աշխարհակալ մի պետություն, որի մասն էր նաև Հայաստանը:

Սակայն անընդմեջ ռազմական գործողությունները Հայաստանի հարավում ձևավորված քրդական ամիրայությունների, Օսմանյան թուրքիայի, Եգիպտոսի և Սիրիայի սուլթանությունների դեմ, ինչպես նաև ներքին հակամարտությունները սպառնեցին Ազ - կոյունլուների կենսական ուժերը: 1502 թ. նրանք կատարյալ պարտություն կրեցին Սեֆևիդներից՝ թողնելով քաղաքական ասպարեզը³³:

Սեֆևիդների օրոք Նախիջևանն իր շրջակա գավառներով կոչվել է Թուման - Ե Նախիջևան: Այն ընդգրկում էր Նախիջևան, Ճահուկ (Շահբուկ)³⁴, Երնջակ (Ալինջա), Գողթն (Ազադ Գիրան), Վայոց ձոր (Դարե - յե Էլիգիս) և Սիսաջան³⁵ գավառները: Մինչև XVII դ. երկրամասը ենթարկվում էր Թավրիզի բեկլարբեկին, իսկ այնուհետև՝ Չուխուր - Սա'դի բեկլարբեկությանը³⁶: Ըստ Վինչենցո Դ'Ալեսանդրիի տեղեկագրի՝ Նախիջևանը եղել է պարսկական թագավորության 52 գլխավոր քաղաքներից մեկը, որը գտնվում էր Մեծ Հայաստանում³⁷:

XVI դ. սկզբներին Սեֆևյան Իրանի և Օսմանյան թուրքիայի միջև սկսված պատերազմը հսկայական կորուստներ պատճառեց Հայաստանին, որի տարածքում կենտրոնացան ինչ ռազմական գործողությունները: 1532 թ. սուլթան Սուլեյմանի զորքերը գրավում են Նախիջևանը³⁸: 1548 թ. հերթական արշավանքի ժամանակ թուրքական զորքերը ավերում են Նախիջևանը, Երևանը, Գանձակը (Գենջե) և Շիրվանը³⁹: Հետագայում, Մուրադ III-ի օրոք, գլխավոր զորահրամանատար նշանակված մեծ վեզիր ֆերիատ փաշան կողոպտում և ավերում է մի շարք երկրամասեր, որոնց թվում նաև Նախիջևանի կողմերը⁴⁰:

1554 թ. սուլթան Սուլեյմանի զորքերը գրավելով Երևանը և Նախիջևանը, ավերում են շրջակա բնակավայրերը և գերեվարում բնակչությանը⁴¹:

³² Ժե դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 283, 333-334; Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 153:

³³ Տես **Ա. Ղարաբյոզյան**, նշվ. աշխ., էջ 45 :

³⁴ Ըստ 1602 թ. գրված հիշատակարաններից մեկի՝ այս բնակավայրը լքել էին նրա բնակիչները՝ չհանդուրժելով այլազգիների բռնությունները. «Եւ մեծ մայրաքաղաք գեղն ճահուկ, զորն ոչ կարէի զհանդուրժել չարչարանացն այլազգաց, ելեալ փախան ի բնակչացն իւրեանց ի ժամանակս այս» (Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 66):

³⁵ Արաբ հեղինակները Սիսաջան են անվանել Մարակերտ կամ Մարավան քաղաքը, որը գտնվում էր Շարուրի դաշտում (մանրամասն տես՝ **Ա. Ա. Карагезян**, Сюник, Нахчаван и Гохтн (историко – географические исследования), Е., 2002, с. 64).

³⁶ Հայ ժողովրդի պատմություն, էջ 251:

³⁷ Տես **Հով. Հակոբյան**, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 344: Դ'Ալեսանդրին Պարսկաստանում եղել է 1571 թ. (տես Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 251, ծան. 7):

³⁸ Թուրքական աղբյուրներ, Գ, Էվլիյա Չելեբի, թարգ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի, Ե., 1967, էջ 81:

³⁹ Նույն տեղում, էջ 93:

⁴⁰ Նույն տեղում, էջ 81:

⁴¹ Մանր ժամանակագրություններ (XIII – XVIII դդ.), հ. I, կազմեց Վ. Հակոբյանը, Ե., 1951, էջ 145, 157:

1555 թ. «Ամասիայի պայմանագրից հետո Անդրկովկասի քաղաքացիական վարչությունը տրոհվեց երեք ռազմական կուսակալությունների և ստեղծվեցին Շիրվանի, Ղարաբաղի և Չուխուր – Սա'դի(Երևան և Նախիջևանի) բեկլարբեկությունները»⁴²:

Սեֆևյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև հերթական պատերազմները սկսվում են 1578 թ.: 1580 թ. քրդական ցեղերը գրավում են Խոյը, Սալմաստը, Նախիջևանը և գերում ու կողոպտում բնակչությանը⁴³: 1581 թ. թուրքական զորքերի կողմից պարսիկների դեմ կազմակերպված նոր արշավանքի ժամանակ բազմաթիվ գավառներ, քաղաքներ և գյուղեր ավերվեցին, բնակչությունը ենթարկվեց կոտորածների և գերեվարության: Հայաստանի տարածքում թուրքական զորքերի կատարած վայրագությունների մասին է խոսում հետևյալ վկայությունը. «... գնացեալ հասին մինչև ի Թավրեզ և ի Նախճուան և զբազում քաղաքս և զգեղս և զգաւառս աւերեալ քանդեցին, զարսն սրով սպանին, զկանայսն և զտղայսն գերի վարեցին և այնչափ անողորմ արարին, զի զտղայսն որորանով կալեալ և ընկեցին ի վառեալ թոնիրն ի մէջ կրակին : Եւ այլ ևս զի տղայքն ի գիրկս մարցն ջամբէին զստինսն, և յանկարծ հասանէին ի վերայ նոցա, զմարսն սպանանէին և արիւնն և կաթն իրար խառնէին և ջամբէին մանկտինքն և ոչ գիտէին զվայս իւրեանց: Եւ ետ այնորիկ բրէին նիզակ և հարկանէին զտղայսն ի ծայրս նիզակաց և վերացուցանէին զտղայս զնիզակսն յերկինս ի վեր և հարկանէին զտղայս ի վերայ քարի...»⁴⁴:

XVII դ. սկզբին Նախիջևանը եղել է մեծ քաղաք: 1604 թ. գրված հայերեն ձեռագիր հիշատակարաններից մեկում այն հիշատակվել է որպես մայրաքաղաք⁴⁵: Խոշոր բնակավայր է եղել Նախիջևանի երկրամասում գտնվող Ջուղան: Ըստ Ջոն Նիուբերիի ուղեգրության 1581 թ. այդ քաղաքում եղել է 3 հազար տուն և 7 եկեղեցի⁴⁶: 1603 թ. Ջուղա այցելած Ջոն Քարթալթը հայտնում է, որ քաղաքում կա 2 հազար տուն և 10 հազար բնակիչ⁴⁷:

Շահ Աբասը (1587 – 1629 թթ.) վերսկսելով ռազմական գործողություններն Օսմանյան Թուրքիայի դեմ գրավում է Թավրիզը, մուտք է գործում Ջուղա, որտեղ «... բազում ստացուածս և գանձս էառ ի նոցանէ: Եւ յետոյ գնացեալ էառ զՆախիջաւան...»⁴⁸: Մինչ այդ՝ Նախիջևանի թուրքական կայազորը թողնում է քաղաքը և անրանում Երևանի բերդում⁴⁹: Գրավելով Նախիջևանը, Շահ Աբասը կարգադրում է քանդել նրա բերդը⁵⁰: Պատերազմական գործողությունների

⁴² Հայ ժողովրդի պատմություն, էջ 85:

⁴³ Տես Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 252:

⁴⁴ Նույն տեղում, էջ 251:

⁴⁵ Տես Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 451:

⁴⁶ Տես **Հով. Հակոբյան**, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 453:

⁴⁷ Նույն տեղում, էջ 460, ծան. 3:

⁴⁸ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Ե., 1974, էջ 259:

⁴⁹ Նույն տեղում, էջ 196:

⁵⁰ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 206:

հետևանքով «[Ի] Ջղոյ մինչև Նախչվան, մինչև Երեվան, մինչև Առզնկան, մինչև Վան ոչ մնաց շինութիւն»⁵¹:

Շահ Աբասի կողմից իրականացրած հայերի բռնագաղթի ժամանակ հատկապես տեղահանվեց և Իրանի խորքերը փոխադրվեց պարսկական ուժերին հետապնդող թուրքական զորքերի ճանապարհին գտնվող բնակավայրերի ողջ բնակչությունը: Հիշատակագրության համաձայն՝ «... յերեվանայ մինչև ի Թարւեզ ԿՈ (60000) [գ]երի արարին»⁵²: Տուժեցին մահ գեղեցկաշեն Ջուղայի և Նախիջևանի բնակիչները: «Թուին ՌԾԵ (1606) էր, շահն որ գերևան, զՋուղա և զՆախճուան այրեաց և զբնակիչքն քչեց տարաւ ի յԱսպահան»⁵³: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ «Ձորն Եղեքաց և Նաղջեվան զամենեսեան սուրկուն տարան»⁵⁴: Գրիչ Արիստակես եպիսկոպոսը Շահ Աբասի գահակալության շրջանի մասին գրում է. «... ի թուականութիւնս Հայոց ՌԿԴ (1615), ի թագավորութիւն Շահ Աբասին, որ զիւր որ[դ] –ին սպանեց և շատ ավեր ածեց աշխարհի՝ զԳուռչըստան աւերեց, և զԷջմիածինն քանդեց, և զ Երկիրն Նեղչուանա խախտեց...»⁵⁵: Բռնագաղթի հետևանքով «...թողին զդաշտն Արարատեան և զՆախջաւան նահանգօքն և զփարթամն ճոխութեամբ զՋուղայ շրջակայիւքն ամայի և թափուր ի բնակչացն»⁵⁶:

1585 թ. թուրքական զորքերն Օսման փաշայի գլխավորությամբ գրավում են Այսրկովկասի և Ատրպատականի բոլոր խոշոր կենտրոնները, որոնց թվում մահ Երևանը և Նախիջևանը⁵⁷: 1590 թ. կնքված պայմանագրով Օսմանյան թուրքիային անցան Ատրպատականը, Արևելյան Հայաստանը, Շիրվանը, Վրաստանը: 1605-1610 թթ. ռազմական գործողությունների ժամանակ Նախիջևանի երկրամասը զերծ մնաց նոր ավերածություններից: 1616-1636 թթ. ընթացող ռազմական գործողությունները հիմնականում տեղի էին ունենում երկրամասի սահմաններից դուրս: Բացառություն են կազմում 1630 և 1634 թթ. տեղի ունեցած դեպքերը: Հիշատակագրության համաձայն՝ 1630 թ. Վանի Ալի փաշան «...ելեալ բազում հեծելօք և զմաց ի վերայ Նախչուանայ և շատ աւեր ետուր և բազում արիւնահեղութիւն արար, և բազում առ և աւար և գերիս բերեալ ի Վան»⁵⁸:

⁵¹ Նույն տեղում: Շահ Աբասն իր արշավանքն իրականացրել է այն մեծ ճանապարհով, որը «Թավրիզի վրայով կապվում էր կենտրոնական Իրանի և այնտեղից էլ Հնդկաստանի ու Միջին Ասիայի, Ջուղայի մոտ անցնելով Արաքսը, Նախիջևանի, Երևանի, Էջմիածնի և Կաղզվանի վրայով տանում էր դեպի Կարին: Այս ճանապարհը կոչվում էր Էրզրումի կամ վաճառականների ճանապարհ» (Հայ ժողովրդի պատմություն, էջ 252):

⁵² ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 412:

⁵³ Նույն տեղում, էջ 236:

⁵⁴ Նույն տեղում, էջ 366:

⁵⁵ Նույն տեղում, էջ 545:

⁵⁶ Նույն տեղում, էջ 130:

⁵⁷ Մանր ժամանակագրություններ, հ. I, էջ 173:

⁵⁸ ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Ե., 1978, էջ 386:

1634 թ. թուրքական զորքերը մուտք գործելով Նախիջևանի գավառ՝ «... դիմեալ ի քարանձաւսն զոմանս քարավեժ արարեալ ի քրիստոնէից և զոմանս սրախողխող արարեալ և զայլսն ձերբակալ արարեալ հանդերձ աւարօք առեալ էանց ի Կարնոյ քաղաք...»⁵⁹: Թշնամու տածած ահից «... ոմանք փախուցեալ ի լերինս և բլուրս շրջէին, ոմանք ի խորափիտս վիմաց և ոմանք ի վիհ և խորագոյն ձոր մտին և այլք ի գլուխ բարձրաբերձ լերանց ելեալ խորշակահարք և կիզեալք ի տօթոյ արեգական, զի թերևս կարիցեն զինքեանս ապրեցուցանել»⁶⁰:

Դեռևս 1631 թ.՝ Մովսէս կաթողիկոսի հայրապետության ժամանակ, քաջ հռետոր և աստվածաբան Խաչատուր վարդապետը «վարդապետական և եպիսկոպոսական իշխանութեամբ առաքեալ եղև ի գաւառս Նախիջևանու և Գողթան՝ ի քաղաքս, ի գեղս և յաւանս յառս քարոզութեան բանին Տեառն»⁶¹: Մեկ այլ հաղորդման համաձայն՝ «... նըստաւ յաթոռ արքեպիսկոպոսութեան տէր Խաչատուր...»⁶²:

Ըստ հայ կաթոլիկ արքեպիսկոպոս Ազարիա Ֆրիտոնի 1601 թ. զեկուցագրի՝ Նախիջևանում եղել է 1780 տուն կամ 19400 հայ կաթոլիկներ, որոնք բնակվում էին Ապարաներ, Ապրակունիս, Քոնա, Սալթաղ, Խոշկաշեն, Մեծ շեն, Գանձակ, Շահապունիք, Ղարաղուշ գյուղերում: XVII դ. սկզբին այս գյուղերում հաստատվել էր նաև փոքրաթիվ թուրքալեզու բնակչությունը⁶³: 1604-1605թթ. Շահ Աբասի իրականացրած հայերի բռնագաղթի հետևանքով կորուստներ ունեցավ նաև հայ կաթոլիկ համայնքը:

Հռոմի պապի և եվրոպական դեսպանների միջամտության շնորհիվ Շահը թույլատրեց հայ կաթոլիկներին վերադառնալ իրենց նախկին բնակության վայրերը⁶⁴: XVII դ. կեսերին երկրամասում հայ կաթոլիկների թիվը հասնում էր 5-7 հազարի⁶⁵: Սակայն միևնույն ժամանակ տնտեսական լծակների կիրառմամբ իրականացվում է հայ բնակչության հարկադրական կրոնափոխություն: XVII դ. կեսերին դավանափոխ եղավ Քոնա, Սալթաղ, Ապարաներ, Գանձակ, Կեծակ և Ղարաղուշ գյուղերի հայ կաթոլիկների մի մասը: XVII դ. վերջին դավանափոխությունը և փախուստը երկրամասից եղել է համատարած⁶⁶:

1639 թ. հաստատված խաղաղությունը նպաստավոր եղավ Արևելյան Հայաստանի և նրա սահմաններում գտնվող Նախիջևանի երկրամասի համար: Որոշա-

⁵⁹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 742:

⁶⁰ Նույն տեղում, էջ 741-742:

⁶¹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, էջ 739:

⁶² Նույն տեղում, էջ 740:

⁶³ Տես **Սահակ Գեմձեմեան**, նշվ. աշխ., էջ 7:

⁶⁴ Նույն տեղում, էջ 8: 1614 թ. Հռոմից առաքելությամբ Նախիջևան մեկնած իտալացի դոմինիկյան Ֆրա Պողոս Մարիամ Զիտադինոն հայ դոմինիկյանների համար ճահուկում բացում է վարժարան, որը հետո փոխադրվում է Ապարաներ (տես **Սահակ Գեմձեմեան**, նշվ. աշխ., էջ 8-9):

⁶⁵ Տես **Սահակ Գեմձեմեան**, նշվ. աշխ., էջ 9:

⁶⁶ Մանրամասն տես նույն տեղում, էջ 10-12, 15, 17:

կի հետաքրքրություն է ներկայացնում Նախիջևան քաղաքի նկարագրությունը: «Իսկապես, որ աշխարհի բութալեմուն նկարների քաղաք է: Ոմանք Նախջվան, ուրիշները՝ Նախշվան են անվանում: Իրանի քաղաքների պարծանքն է: Ներկայումս Ադրբեջանի տերիտորիայում ընկած առանձին խանություն է, որի խանը մեծ թվով զինվորներ ունի: Ունի նաև պետության հավատարմատար, քալանթար, մյունշի և այլ պաշտոնյաներ, որոնք բոլորը պետական գործ են կատարում: Կա նաև կադի և շեյխ-ուլ-իսլամ: Այս քաղաքը կառուցել է Շահ-էֆրասյաբը, որի նախահայրերի գերեզմանների կամարները ներկայումս էլ երևում են: Նրա իշխանության ժամանակ Նախիջևանը բարեշեն և հարուստ է եղել, դաշտերում և հարթավայրերում մի թիզ անմշակ հող անգամ չի մնացել: Հետո մոնղոլական ցեղերը, ազահությունից դրոպած, եկել են անթիվ զինվորներով և ավերել, քանդել այս քաղաքի նաքշիջիհանները, բերդը հիմնահատակ կործանել և հողին են հավասարեցրել: Հետագայում օսմանցի սուլթան Մուհամեդ խան III-ի օրոք, երբ քաղաքը օսմանցիների ձեռքում է եղել, «մոլորյալ շահի» կողմից եկել է Ջյուլֆիքար խանը և Նախիջևանը գրավել: Այնուհետև, սուլթան Մուրադ խան IV-ի զինվորները եկել և Դաբանի Յասը Մուհամմեդ փաշայի գլխավորությամբ գրավել են այս քաղաքը...

(Սուլթան) Մուրադ IV-ից հետո այս վայրը ավելի է բարեշինվել ու հարստացել: Քաղաքում 10 հազար 200 հողածածկ մեծ տներ, 70 ջամի և աղոթատեղիներ, 40 մզկիթ, 20 հյուրանոց, 7 գեղեցիկ բաղնիք և մոտ 1000 խանութներ կան: Շինությունների մեծ մասը գեղեցիկ է: Քաղաքը գտնվում է չորրորդ կլիմայի կենտրոնում, օդը բավականին խիստ է, այգիները և պարտեզները քիչ են և պտղատու ծառերն էլ սակավ: Ունի 7 տեսակի բամբակ՝ զադի, մոնլայի, զաֆերանի, լալի, խաս, սպիտակ: Տորենն ու գարին հայտնի են: Արհեստավորները լավ վարպետներ են. փորագրիչներից հայտնի են Բահրամ Յուրին և Դեսթե Խանին: Ամբողջ աշխարհում ճանաչում են գտել այդտեղի չթերը: Գարին շատ առատ է և ուժեղ, սև գարու չորս օկկան բավականացնում է մի ձիուն: Բանջարանոցներում ընտիր ձմերուկ և սեխ է լինում: Կանայք սպիտակ և բարեձև գեղեցկուհիներ են: Տղամարդիկ երկար գլխակապ են փաթաթում և գեղեցիկ զարդարում փեշերով հագուստներ հագնում: Ոտքերին գույնզգույն թաղիքե կոշիկ, կանաչ, կարմիր և նարնջագույն չստեր են կրում: Կանայք սուր-սուր թաքիյեններ են դնում [գլխներին] և ծածկվում են սպիտակ սավանով, ոտքերին գույնզգույն չըզմաներ հագնում: Ընտրյալները բազմատեսակ, բարձրորակ Իսֆահանի մուշտակներ են հագնում, ծանրաբարո շարժ ու ձև ունեն, նուրբ ու գեղեցիկ են խոսում և ժողովրդի հետ մոտիկություն ցույց տալիս: Ժողովուրդը շաֆիներ են...

Մեծ և հիանալի ջամիներ կան, ինչպես օրինակ՝ Գյոզել Ալի փաշայի, Ջղալ-օղլիի, Խատեն Ջաֆեր փաշայի ջամիները, որոնք նկարագարող, ֆադֆուրով և չինական ապակիներով զարդարված ջամիներ են: Շատ ջամիների կամարները հախճապակիով են ծածկված...»⁶⁷:

Էվ. Չելեբին Նախիջևանի խանության սահմաններում կատարած շրջագայու-

⁶⁷ Թուրքական աղբյուրներ, Գ, Էվլիյա Չելեբի, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի, Ե., 1967, էջ 71-72:

թյան ժամանակ Նախիջևանի դաշտի նահիեներում տեսել է մի քանի ամրակուռ բերդեր և գրի առել դրանց անունները. էլնեջար Վան, Սերան, Սոսո Մուրան կամ Սոսի – Միրվան⁶⁸: Նախիջևանի տարածքում գտնվող խոշոր ամրություններից հիշատակվել է Չորսի բերդը, որն ունեցել է 2000 զինվորներից բաղկացած կայազոր⁶⁹: Անատոլիայի և Հայաստանի բնակչության կենցաղը, սովորույթները նկարագրելիս, լեզուն և մշակույթը ուսումնասիրելիս մոռացության են տրված ոչ մուսուլմանները: Հայ մշակույթի մասին տեղեկությունները շատ սահմանափակ են: Հայկական քաղաքների մասին տեղեկություններից տպավորություն է ստեղծվում, որ այդ բնակավայրերում հայեր չեն ապրում: Հայկական ծագում և արտասանություն ունեցող հատուկ անուններն ու բառերն աղավաղված են և բացատրվում են թուրքական ոգով⁷⁰: Նույն պատկերն է ուրվագծվում նաև Նախիջևանի պարագայում:

XVII դ. առաջին կեսին Նախիջևանի երկրամասում հայաբնակ բնակավայրեր են եղել Շոռոթ գյուղաքաղաքը⁷¹, Շահկերտ գյուղը⁷², ճահուկը⁷³, Ագուլիսը⁷⁴, Ագուլյաց դաշտ գյուղը⁷⁵, Երնջակ ավանը⁷⁶, իսկ որպես գրչության կենտրոններ՝ Նախիջևանը⁷⁷, Ջուղան⁷⁸, Խառցնը⁷⁹, Օղբինը⁸⁰, Ագուլիս գյուղաքաղաքը⁸¹, Ցղնան⁸², Փառական⁸³, Շոռոթ գյուղաքաղաքը⁸⁴, Երնջակ ավանը⁸⁵: Հռչակավոր բնակավայր է համարվել Շոռոթը⁸⁶: XVII դ. երկրորդ կեսին հիշատակվել են մի-

⁶⁸ Նույն տեղում, էջ 73:

⁶⁹ Նույն տեղում, էջ 80:

⁷⁰ Նույն տեղում, էջ 16:

⁷¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, հ. Բ, , էջ 433, 454, 700:

⁷² Նույն տեղում, էջ 377:

⁷³ Նույն տեղում, էջ 789:

⁷⁴ Նույն տեղում, էջ 683, 684, 789:

⁷⁵ Նույն տեղում, էջ 582:

⁷⁶ Նույն տեղում, էջ 728:

⁷⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, հ. Ա, էջ 623:

⁷⁸ Նույն տեղում, էջ 99, 183-184:

⁷⁹ Նույն տեղում, էջ 64::

⁸⁰ Նույն տեղում, էջ 10:

⁸¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, հ. Բ, էջ 744, 769, 826:

⁸² Նույն տեղում, էջ 547, 550:

⁸³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, հ. Բ, էջ 738:

⁸⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1984, էջ 77, 103, 265, 303, 309, 348, 399, 404, 406:

⁸⁵ Նույն տեղում, էջ 396:

⁸⁶ Նույն տեղում, էջ 104:

այն Շոռոթը⁸⁷, Գաղ գյուղը⁸⁸, Նորաշեն գյուղը⁸⁹, Երնջակ ավանը⁹⁰, Ապրակունյաց վանքը⁹¹:

XVII դ. երկրորդ կեսին Նախիջևանի երկրամասի հոգևոր կենտրոնը գտնվում էր Երնջակի Ապրակունեաց ս. Կարապետ վանքում: Այդ մասին նշվում է 1651 թ. գրված հիշատակարաններից մեկում. «... Ընդ հովանեաւ գեղապանծութեամբ շքեղացեալ տանս մեծի և տիեզերահրչակելի մեմարանիս, որ Ապրակունե [աց] ս. Կարապետ յորջորջի և գահ երիցութեան մահանգիս բոլորից Նախճուանայ և Երնջ[ակ]ոյ»⁹²:

XV – XVII դդ. Նախիջևանի երկրամասի նախկին քաղաքների փոխարեն հանդես եկան մի քանի ոչ մեծ քաղաքներ և գյուղաքաղաքներ (Որդուար, Ագուլիս, Ջուղա, Աստապատ, Շոռոթ, Ցղնա), որոնք հայտնի էին իրենց արհեստագործությամբ⁹³: XII – XVII դդ. Նախիջևան, Ագուլիս, Ջուղա, Որդուար, Շոռոթ քաղաքներում եղել են մեկ տասնյակից ավելի իջևանատներ⁹⁴: XVII դ. հիմնովին վերակառուցվեցին Նորսի ս. Երրորդություն, Ազնաբերդի ս. Գրիգոր, Քյոլքի ս. Գրիգոր, Որդուարի ս. Ստեփանոս քառամույթ եկեղեցիները, ինչպես նաև Ագուլիսի ս. Թովմա, Մեծ Աստվածածին, Ապրակունիսի ս. Կարապետ, Շոռոթի ս. Գր. Լուսավորիչ, Կուքիի ս. Նշան, Ջուղայի Ամենափրկիչ, Օծոփի ս. Աստվածածին, Աստապատի ս. Ստեփանոս, Փորադաշտի ս. Ստեփանոս վանական համալիրները⁹⁵:

XVII դ. կառուցվել և վերակառուցվել են մի շարք կամուրջներ: Դրանցից են Ազայի կամուրջը, Բոհրուտ (Բեխրուտ) գյուղի մոտ գտնվող կամուրջը (կառուցվել է XIV-XV դդ., վերակառուցվել՝ XVII-XVIII դդ.), Փառակայի կամուրջը, Գիրան և Մեսրոպավան գետերի վրա կառուցված Բիստ գյուղի կամուրջները, Աղահեցիկի կամուրջը: Երնջակ գետի վրա կառուցվել են Շահկերտի (կառուցվել է 1551 թ. շահկերտցի Պողոս Ղազանչեցու կողմից), Նորաշենի, Խանաղայի, Քոնայի, Լաքաթաղի կամուրջները: Միակամար կամուրջների հետքեր կան Վանանդ Արփա, Նախիջևան գետերի և նրանց վտակների ափերին: XVII – XVIII դդ. շինություններ են Ագուլիսում պահպանված կամուրջները⁹⁶: Հիշատակելի է նաև, որ «XV – XVII դդ. կերտվում են բազմահազար կոթողներ ևս, որոնց գլուխգործոցն, անշուշտ, Ջուղայի խաչքարերի անտառն է»⁹⁷:

⁸⁷ Նույն տեղում, էջ 550, 554, 615, 672, 766, 833, 909:

⁸⁸ Նույն տեղում, էջ 832:

⁸⁹ Նույն տեղում, էջ 958:

⁹⁰ Նույն տեղում, էջ 870:

⁹¹ Նույն տեղում, էջ 492:

⁹² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 492-493:

⁹³ **Ա. Ա. Այվազյան**, Նախիջևան. գիրք հուշարձանաց, Ե., 1990, էջ 11:

⁹⁴ Նույն տեղում, էջ 11-12:

⁹⁵ Նույն տեղում, էջ 16:

⁹⁶ Նույն տեղում, էջ 18-22:

⁹⁷ Նույն տեղում., էջ 24:

ВОПРОСЫ ИСТОРИИ НАХИЧЕВАНСКОГО КРАЯ В 14-17 ВЕКАХ

А. А. Карагезян

В статье представлены социально-экономическая и политическая история, демографическая ситуация, культурные центры и памятники армянской архитектуры Нахичеванского края исторической Армении.

THE QUESTIONS OF THE HISTORY OF THE NAKHICHEVAN REGION IN THE 14-17 CENTURIES

A. H. Gharagyozyan

In the article are represented the social-economic and political history, demographic situation, the cultural centers and monuments of the Armenian architecture of the Nakhichevan edge of historical Armenia.

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ. ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆԿԱԼՄԱՆ ՍԱՂՄԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Ա. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու,
Գավառի պետական համալսարանի պատմության ամբիոնի դասախոս*

Թուրքիայի և Պարսկաստանի՝ Առաջավոր Ասիայի ստրատեգիական դիրքերին, անդրկովկասյան հաղորդակցության ուղիներին ու առևտրային հանգույցներին տիրանալու ձգտումների արդյունքում Հայկական լեռնաշխարհի երբեմնի մարդաշատ բնակավայրերը XVI դարի սկզբներից վերածվեցին մարտադաշտի: Երկուսն ու կես դար տևող պատերազմական գործողությունների ընթացքում հիշյալ տարածքն ամբողջությամբ ավերվեց, բնակչության գերակշռող մասը ոչնչացվեց, իսկ մի զգալի մասը՝ արտագաղթեց ճնշումներից ու ջարդերից ազատվելու նպատակով [2, 72-78; 8, 603-615; 3, 7-18]:

Թուրքական և պարսկական տիրապետության օրոք հայ ժողովուրդը գոյատևում էր ստորացուցիչ պայմաններում՝ մշտապես որոնելով փրկության ուղիներ այդ դժգոհ լծից ազատագրվելու համար: Սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումների, առաջադիմական ուժերի ու գաղափարախոսությունների ի հայտ գալու հետ կապված՝ հայոց ազատագրական շարժումը մերթ փոքր էր ապրում, մերթ՝ անկում: Այն նոր վերելք ապրեց XVIII դարի երկրորդ կեսին՝ պայմանավորված հայ բուրժուազիայի ծնավորմամբ: Այս փուլում ազատագրական շարժման կենտրոններ դարձան հայ գաղթօջախները [7, 773-774; 8,